Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-737[1]-16.09.2020,07.12.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 1-ին, 1.1-րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.7-րդ, 1.8-րդ, 3-րդ, 3.1-րդ և 3.2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 1.6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.6.	պետական գրանցում իրականացնող այլ մարմնի կողմից գրանցված (հաշվառված) կազմակերպություններին, առանձնացված ստորաբաժանումներին ու հիմնարկներին անձի դիմումի համաձայն պետական ռեգիստրի կողմից գրանցման (հաշվառման) համար (առանց փոփոխությունների գրանցման կամ հաշվառման)	բազային տուրքի 10-ապատիկի չափով».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.12-րդ կետ.

«1.12.	Պետական միասնական գրանցամատյանում գրանցման (հաշվառման) ենթակա	
	1) ոչ առևտրային կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների) պետական գրանցման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	2) կուսակցությունների պետական գրանցման համար	Բազային տուրքի 50-ապատիկի չափով
	3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված	բազային տուրքի

	իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների հաշվառման համար	10-ապատիկի չափով
	4) Օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների հաշվառման համար	Բազային տուրքի 50-ապատիկի չափով
	5) իրավաբանական անձանց և դրանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, պետական միասնական գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունների փոփոխությունների (բացառությամբ իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման, լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ տեղեկությունների գրառման, պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար , ինչպես նաև այն տեղեկությունների փոփոխությունների գրանցման համար, որոնք արդիականանում են պետական միասնական գրանցամատյանում ինքնաշխատ կերպով) գրանցման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	6) իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գործադիր մարմնի ղեկավարի կամ մասնակցի տվյալների (բացառությամբ այն տեղեկությունների, որոնք արդիականանում են ինքնաշխատ կերպով) փոփոխության պետական գրանցման համար	Բազային տուրքի 5-ապատիկի չափով
	7) դիմումի համաձայն պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման (գրանցումների) համար	Բազային տուրքի 20-ապատիկի չափով
	8) իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար	Բազային տուրքի 20-ապատիկի չափով
	9) իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված յուրաքանչյուր պետական գրանցման համար (նոր ստեղծվող իրավաբանական անձի պետական գրանցում,	բազային տուրքի 50-ապատիկի չափով

	փոփոխության պետական գրանցում, գործունեության դադարման վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցում)	
	10) հիմնարկների և առանձնացված ստորաբաժանումների վերակազմակերպմամբ պայմանավորված յուրաքանչյուր պետական հաշվառման համար (նոր ստեղծվող պետական հաշվառում, փոփոխության պետական հաշվառում, գործունեության դադարման վերաբերյալ տեղեկությունների պետական հաշվառում)	բազային տուրքի 50-ապատիկի չափով».

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման նպատակով թղթային եղանակով դիմումի ընդունման համար բազային տուրքի եռապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածի 12-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Իրավաբանական անձն ազատվում է վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցման համար, նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման կամ իր առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի նոր խմբագրությամբ կանոնադրության պետական հաշվառման համար պետական տուրքի վճարումից, եթե պետական գրանցումը կամ հաշվառումը պայմանավորված է պետական ռեգիստրում գրանցումից կամ հաշվառումից հետո ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վերակազմակերպվելու կամ կանոնադրությունը օրենքին համապատասխանեցնելու օրենքով սահմանված անհրաժեշտությամբ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 5. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված դիմումների քննության համար պետական տուրքը գանձվում է դիմումը ներկայացնելու պահին գործող պետական տուրքի դրույքաչափերով:

Տեղեկանք

Երկրորդ ընթերցում
Լրամշակված նախագիծ

Կ-737[1]-16.09.2020,07.12.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 1-ին, 1.1-րդ, 1.3-րդ, 1.4-րդ, 1.7-րդ, 1.8-րդ, 3-րդ, 3.1-րդ եւ 3.2-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել.

2) 1.6-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1.6.	պետական գրանցում իրականացնող այլ մարմնի կողմից գրանցված (հաշվառված) կազմակերպություններին, առանձնացված ստորաբաժանումներին ու հիմնարկներին անձի դիմումի համաձայն պետական ռեգիստրի կողմից գրանցման (հաշվառման) համար (առանց փոփոխությունների գրանցման կամ հաշվառման)	բազային տուրքի 10-ապատիկի չափով».

3) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.12-րդ կետով.

«1.12.	Պետական միասնական գրանցամատյանում գրանցման (հաշվառման) ենթակա	
	1) ոչ առեւտրային կազմակերպությունների (բացառությամբ կուսակցությունների) պետական գրանցման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	2) կուսակցությունների պետական գրանցման համար	Բազային տուրքի 50-ապատիկի չափով
	3) Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների հաշվառման համար	բազային տուրքի 10-ապատիկի չափով
	4) Օտարերկրյա իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների հաշվառման համար	Բազային տուրքի 50-ապատիկի չափով
	5) իրավաբանական անձանց եւ դրանց առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների կանոնադրությունների փոփոխությունների ու լրացումների, նոր խմբագրությամբ կանոնադրությունների, պետական միասնական գրանցամատյանում գրառման ենթակա տեղեկությունների փոփոխությունների (բացառությամբ իրավաբանական անձի լուծարման պետական գրանցման, լուծարման գործընթացում	բազային տուրքի 10-ապատիկի չափով

	գտնվելու վերաբերյալ տեղեկությունների գրառման, պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար , ինչպես նաեւ այն տեղեկությունների փոփոխությունների գրանցման համար, որոնք արդիականանում են պետական միասնական գրանցամատյանում ինքնաշխատ կերպով) գրանցման համար	
	6) իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների եւ հիմնարկների գործադիր մարմնի ղեկավարի կամ մասնակցի տվյալների (բացառությամբ այն տեղեկությունների, որոնք արդիականանում են ինքնաշխատ կերպով) փոփոխության պետական գրանցման համար	Բազային տուրքի 5-ապատիկի չափով
	7) դիմումի համաձայն պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման (գրանցումների) համար	Բազային տուրքի ~~30~~20-ապատիկի չափով
	8) իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցման համար	Բազային տուրքի 20-ապատիկի չափով
	9) իրավաբանական անձանց վերակազմակերպմամբ պայմանավորված յուրաքանչյուր պետական գրանցման համար (նոր ստեղծվող իրավաբանական անձի պետական գրանցում, փոփոխության պետական գրանցում, գործունեության դադարման վերաբերյալ տեղեկությունների պետական գրանցում)	բազային տուրքի 50-ապատիկի չափով
	10) հիմնարկների եւ առանձնացված ստորաբաժանումների վերակազմակերպմամբ պայմանավորված յուրաքանչյուր պետական հաշվառման համար (նոր ստեղծվող պետական հաշվառում, փոփոխության պետական հաշվառում, գործունեության դադարման վերաբերյալ տեղեկությունների պետական հաշվառում)	բազային տուրքի 50-ապատիկի չափով».

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման նպատակով թղթային եղանակով դիմումի ընդունման համար բազային տուրքի եռապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենքի 29-րդ հոդվածի 12-րդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Իրավաբանական անձն ազատվում է վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցման համար, նոր խմբագրությամբ կանոնադրության պետական գրանցման կամ իր առանձնացված ստորաբաժանման, հիմնարկի նոր խմբագրությամբ կանոնադրության պետական հաշվառման համար պետական տուրքի վճարումից, եթե պետական գրանցումը կամ հաշվառումը պայմանավորված է պետական ռեգիստրում գրանցումից կամ հաշվառումից հետո ուժի մեջ մտած Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն վերակազմակերպվելու կամ կանոնադրությունը օրենքին համապատասխանեցնելու օրենքով սահմանված անհրաժեշտությամբ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հոդված 5. Մինչեւ սույն օրենքի ուժի մեջ մտնելը ներկայացված դիմումների քննության համար պետական տուրքը գանձվում է դիմումը ներկայացնելու պահին գործող պետական տուրքի դրույքաչափերով:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ ԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-737-16.09.2020-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	«Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 10-րդ հոդվածի 1-ին մաս, 22-րդ հոդվածի 2-րդ մաս և 25-րդ	Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետությունում կնիքի անհրաժեշտությանն առընչվող դրույթների բացակայությունը, նախագծից հանել լուծարման պետական գրանցման կամ դադարման պետական հաշվառման դեպքերում կնիքը հանձնելու մասին դրույթները:	Նախագծից հանվել են 11-րդ հոդվածի 1-ին մասը, 24-րդ հոդվածի 2-րդ մասը և 27-րդ հոդվածը:	Ընդունվել է

		հոդված:			
2.	ՀՀ կառավարություն	1) 1-ին հոդվածի 1-ին մաս 2)Նախագծի 5-րդ հոդված 3)Նախագծի 12-րդ հոդված 4) Նախագծի 18-րդ հոդվածի 3-րդ մաս 5)Նախագծի 19-րդ հոդվածի 1-ին մաս 6) Նախագծի 13-րդ	Օրենքը լրացնել 9-րդ հոդվածի 2-րդ մասով, հետևյալ բովանդակությամբ՝ «Կանոնադրությանը, կանոնադրության փոփոխությանը կամ լրացմանը (կամ նոր խմբագրությամբ կանոնադրությանը), կուսակցության ծրագրին, փոխանցման ակտին ու բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին կից ստեղծվում է պետական ռեգիստրի՝ էլեկտրոնային կնիքով հավաստված նշաթերթ, որում կատարվում է տվյալ պետական գրանցման մասին տեղեկությունների գրառում: Գրառման բովանդակությունը և այն կատարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարը:», Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետից հանել «,ներկայացված օրինակների քանակի և օրինակի հերթական համարի» բառերը Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «՝հաստատված հիմնադրի (հիմնադիրների) կամ հիմնադիր ժողովի (համագումարի կամ օրենքով սահմանված այլ մարմնի) կողմից» բառերը Օրենքի 42-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «8. Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի	Նախագիծը լրացվել է 1-ին հոդվածի 1-ին մասով, 5-րդ հոդվածով, 12-րդ հոդվածով, 18-րդ հոդվածի 3-րդ մասով, 19-րդ հոդվածի 1-ին մասով, փոփոխվել են նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը, 13-րդ հոդվածի 6-րդ մասը և 20-րդ հոդվածի 1-ին մասը:	Ընդունվել է

		հոդվածի 6-րդ մաս 7) Նախագծի 20-րդ հոդվածի 1-ին մաս	կանոնադրության փոփոխությանը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի փոփոխությունների գրանցման տարին, ամիսը, օրը և համապատասխան փոփոխության բնույթն ու հերթական համարը:»: Օրենքի 44-րդ հոդվածի՝ 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերի 2-րդ կետերի գ) ենթակետերից հանել «կամ կանոնադրության առնվազն երկու օրինակ՝ թղթային կրիչի վրա» բառերը, Օրենքի 35-րդ հոդվածի 10-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «10.Գրանցումը կատարելու հետ միաժամանակ իրավաբանական անձի կանոնադրությանը կցվում է նշաթերթ, որը բովանդակում է իրավաբանական անձի գրանցման համարը, գրանցման տարին, ամիսը, օրը և հարկ վճարողի հաշվառման համարը:», Օրենքի 45-րդ հոդվածի 7-րդ մասը շարադրել է հետևյալ խմբագրությամբ. «7. Իրավաբանական անձանց		

			վերակազմակերպմամբ պայմանավորված պետական գրանցումներ կատարելուց հետո ներկայացված փոխանցման ակտին կամ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշռին կցվում է նշաթերթ, որը բովանդակում է տվյալ փաստաթղթի համաձայն կատարված պետական գրանցման տարին, ամիսը, օրը:»:		
3.	ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Հստակեցնել Գործակալության սպասարկման գրասենյակի գործառույթները իրականացնող մարմինների և անձանց ցանկերը: Սահմանել, որ դիվանագիտական ծառայության մարմինները ընդունում են դիմումներ:	Նախագծի 3-րդ հոդվածը վերաձևակերպվել է:	Ընդունվել է
4.	ՀՀ կառավարություն	Նախագծի 16-րդ հոդված	Գործող իրավաբանական անձանց էլեկտրոնային փոստի մասին տեղեկությունների (առանց կանոնադրության փոփոխությունների կամ նոր խմբագրությամբ կանոնադրության) փոփոխության դեպքում նախատեսել գրանցման իրականացումն առանց պետական տուրքի վճարման: Միաժամանակ էլեկտրոնային փոստի մասին տեղեկությունների բացակայության դեպքում իրավաբանական անձանց համար սահմանել ժամկետ, որի ընթացքում իրավաբանական անձինք պարտավոր են ներկայացնել նշված տեղեկատվությունը:	Ընդունվել է: Նախագծի 16-րդ հոդվածը լրացվել է 2-րդ մասով:	Ընդունվել է
5.	«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	Նախագիծ	Նախագծում «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն» և «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար» բառերը փոխարինել համապատասխանաբար «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարություն»	Ընդունվել է: Նախագծի 1-ին, 3-րդ, 7-րդ, 8-րդ 18-րդ և 28-րդ հոդվածներում կատարվել են առաջարկված փոփոխությունները:	Ընդունվել է

			և «արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարար» բառերով:		
6.	ՀՀ կառավարություն	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	Տարընթերցումներից խուսափելու նպատակով «պետական ռեգիստրում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար» տողը «պետական» բառից առաջ լրացնել «դիմումի համաձայն» բառերով, իսկ «գրանցման» բառից հետո լրացնել «(գրանցումների)» բառով:	Կատարվել է առաջարկված փոփոխությունը:	Ընդունվել է
7.	«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Արթուր Դավթյան	«Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մաս	ՍՊ ընկերությունների մասնակիցների փոփոխությամբ պայմանավորված գրանցման համար պետական տուրքի դրույքաչափը 30-ապատիկից նվազեցնել 20-ապատիկի:	Ընդունվել է: Կատարվել է առաջարկված փոփոխությունը:	Ընդունվել է

8.	ՀՀ կառավարություն	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Նախագիծը հանել օրենքների փաթեթից:	Նախագիծը հանվել է օրենքների փաթեթից:	Ընդունվել է
9.	ՀՀ կառավարություն	«Հյուպատոսական ծառայության մասին» օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ)	Օրենքի 1-ին հոդվածի «ա» մասում ներկայացուցչությունների բառը փոխարինել «ծառայության մարմինների» բառերով: Առաջարկվող փոփոխության արդյունքում կստացվի, որ «հյուպատոսական հիմնարկ», հետևաբար նաև «հյուպատոսական հիմնարկի ղեկավար» հասկացությունների տակ կմտնեն համապատասխանաբար՝ «Դիվանագիտական ծառայություն մասին» օրենքով սահմանված դիվանագիտական ծառայության մարմինները, այն է՝ Նախարարությունը, ՀՀ դեսպանությունները և հյուպատոսական հիմնարկները, ինչպես նաև դրանց ղեկավարները և առանձին պաշտոնատար անձինք, որոնք կատարում են հյուպատոսի պարտականություններ: Արդյունքում սույն նախագծով առաջարկվող 22.1 հոդվածի լրացումը վերաբերելի կլինի նաև ՀՀ ԱԳՆ հյուպատոսական վարչությանը, որպես Դատվածության մասին տեղեկանք տրամադրող մարմին:	Կատարվել է առաջարկված բոլոր փոփոխությունները և լրացումները:	Ընդունվել է

		Նախագծի 5-րդ հոդված	Օրենքի 42-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել: Քանի որ 40-րդ հոդվածի 1-ին մասում հստակ նշվում է, որ գրանցումը կատարվում է «համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության»: Կարծում ենք այս ձևակերպումը բավարար է՝ հաշվի առնելով, որ ՔԿԱԳ գրացնումների կարգը արտաքին գործերի և արդարադատության նախարարների համատեղ հրահանգով չի կարգավորվում, ինչպես նշված է 42-րդ հոդվածում:		Ընդունվել է
		Նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ	Օրենքը լրացնել 22.1-ին և 22.2-րդ հոդվածներով՝ տեղեկանքների տրամադրման վերաբերյալ:		Ընդունվել է
		Նախագծի 4-րդ հոդված	Օրենքի 2-րդ բաժնի 11-րդ գլխի վերնագիրը վերախմբագրել:		Ընդունվել է
		Նախագծի 6-րդ հոդված	Օրենքի 42.1-ին կետը լրամշակել:		Ընդունվել է
10.	«Իմ քայլը» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյան	Նախագիծ	Նախագծում կիրառվող նախարարությունների անվանումները փոխարինել «Կառավարության արտաքին գործերի/արդարադատության ոլորտը մշակող և իրականացնող նախարարություն» բառերով՝ նույնական մոտեցում ցուցաբերելով նաև համապատասխան նախարարներին վերաբերող լիազորությունները կարգավորող դրույթներում:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ և 6-րդ հոդվածներում կատարվել են առաջարկված փոփոխությունները:	Ընդունվել է